

Հայտարարություն-հատուկ կարծիք

Շահառուների խորհրդի 4-րդ կազմի թվով 8 անդամների ս.թ. հոկտեմբերի 13-ին տեղի ունեցած հանդիպման («նիստի») վերաբերյալ

Ս. ք. սեպտեմբերի 26-ի տեղի ունեցած «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան ծրագրի (այսուհետև՝ ՀՄՀ-Հայաստան) Շահառուների խորհրդի (այսուհետև՝ ՇԽ) անդամների ընտրություններում 16-րդ և 17-րդ զբաղեցրած թեկնածուները խնդրել էին ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ անդամների ընտրական հանձնաժողովին կատարելու քվեաթերթիկների վերահաշվարկ, քանի որ 13, 14, 15 տեղերում գտնվող թեկնածուների և 16-րդ տեղում գտնվող թեկնածուի ձայների տարբերությունը կազմել է համապատասխանաբար չորս, երեք և մեկ ձայն: Այս տարվա հոկտեմբերի 1-ին կայացել է քվեաթերթիկների ոչ թե վերահաշվարկ, այլ վերանայում (ՀՀ ընտրական օրենսդրությամբ և ՇԽ անդամների ընտրությունների կարգով նախատեսված չէ): Քվեաթերթիկների վերանայման գործընթացից պարզվել է, որ թվով 4 քվեաթերթիկներ համարվել են «վավեր», որոնց մեջ կատարված նշան ձևը ակնհայտորեն հակասում է ՇԽ անդամների ընտրակարգով սահմանված ձևին: Այդ ամենը արձանագրվել է նիստին մասնակցած ընտրական հանձնաժողովի քարտուղարի, մասնակցող դիտորդների, ՇԽ ընտրված անդամների, ՇԽ անդամության թեկնածուների և նրանց լիազոր ներկայացուցիչների հատուկ կարծիքներով: Ականատես լինելով օրենսդրությանը հակասող նմանատիպ գործունեության՝ մենք դիմել ենք «ՀՄՀ-Հայաստան» Կառավարման Գրասենյակին (այսուհետև՝ ԿԳ)՝ կազմակերպելու քվեարկության արդյունքների վերահաշվարկ և ձեռնպահ մնալու ՇԽ նիստ գումարելուց, որովհետև վերանայման արդյունքում արձանագրված խախտումներն էապես կարող էին ազդել քվեարկության վերջնական արդյունքների վրա՝ ելնելով ձայների քանակական տարբերությունից: Սակայն մեր հարցադրումները և հորդորները մնացել են անպատասխան: Դեռ ավելին. այս տարվա հոկտեմբերի 13-ին «ՀՄՀ-Հայաստան» ԿԳ-ի նախաձեռնությամբ գումարվել է «ՇԽ չորրորդ կազմի առաջին նիստը», որին մասնակցել են ՇԽ ընտրված ընդամենը 8 անդամներ: Չնայած որ այդ հանդիպումը անվանվել է «ՇԽ չորրորդ կազմի առաջին նիստ», սակայն այդ հավաքը ՇԽ նիստ համարվել չի կարող, քանի որ նրան մասնակցել են ընտրված ՇԽ 15 անդամներից միայն 8-ը:

Ծանոթանալով նշված հանդիպման մանրամասներին և մասնակիցների կողմից ընդունված որոշումներին՝ գտնում ենք, որ դրանք ամենևին էլ չեն բխում ծրագրի իրականացման համար հիմք հանդիսացող ՀՀ միջազգային պայմանագրերի և այլ իրավական ակտերի դրույթներից: Մասնավորապես՝ ՇԽ «նիստին մասնակից 8 անդամներով նիստ գումարելու» որոշումը կայացվել է Հազարամյակի մարտահրավեր Համաձայնագրի, Կառավարման Համաձայնագրի և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի ՇԽ կանոնակարգի դրույթների պահանջների խախտմամբ, քանի որ նորընտիր «ՇԽ առաջին նիստին» ներկա են եղել ՇԽ ընդամենը 8 անդամներ: Սակայն, համաձայն ՇԽ

կանոնակարգի 3.9 կետի «Շահառուների խորհրդի նիստերն իրավազոր են, եթե նիստին ներկա են խորհրդի անդամների առնվազն 2/3-ը, ներառյալ նիստից բացակայող անդամների լիազոր ներկայացուցիչները (փոխարինողները)»: Այս դեպքում ակնհայտ է, որ ՇԽ առաջին նիստը չի կարելի համարել իրավազոր: Արդյունքում՝ «ՀՄՀ-Հայաստան» ԿԳ-ն, ՇԽ նորընտիր 8 անդամների հետ միասին խախտելով ՇԽ կանոնակարգը, գումարել է նիստ, որը իրավազոր չէ:

Այնուհետև, ՇԽ ընդամենը 8 անդամները, առաջնորդվելով «ՀՄՀ-Հայաստան» ԿԳ իրավաբանի Կառավարման Համաձայնագրի և ՇԽ կանոնակարգի ակնհայտ շահագրգիռ, ոչ օբյեկտիվ և ոչ լիարժեք պարզաբանմամբ (ի դեպ Կառավարման համաձայնագրի վիճելի կետերի վերաբերյալ պարզաբանման յուրաքանչյուր հարց մինչ այդ պահը լուծվել է կորպորացիայի կողմից) հիմք են ընդունել Կառավարման համաձայնագրի III հոդվածի Բաժին 3.0. (բ) կետը: Վերջինիս համաձայն «Շահառուների խորհրդի ցանկացած նիստի ընթացքում քվորում ապահովվում է Շահառուների խորհրդի անդամների առնվազն պարզ մեծամասնությամբ»: Փաստորեն գումարվել է ՇԽ ոչ օրինական «նիստ և ընդունվել որոշումներ»՝ պատճառաբանելով, որ Կառավարման համաձայնագիրն ավելի բարձր իրավական ուժ ունեցող փաստաթուղթ է, քան ՇԽ կանոնակարգը: Չառարկելով դրա դեմ՝ պետք է փաստել, որ վերոհիշյալ հարցում այդ երկու փաստաթղթերը որևէ կերպ միմյանց չեն հակասում, որովհետև Կառավարման համաձայնագիրը սահմանում է ՇԽ նիստերի քվորումի ստորին շեմը՝ «Շահառուների խորհրդի անդամների առնվազն պարզ մեծամասնությամբ», իսկ ՇԽ կանոնակարգը, հիմք ընդունելով վերոհիշյալ դրույթը և հենվելով դրա վրա՝ չի նվազեցնում այն պարզ մեծամասնությունից ավելի ցածր շեմի: Ընդհակառակը՝ այն սահմանում է քվորումի ապահովման ավելի բարձր՝ 2/3 շեմ:

Այդպիսի մոտեցումը հիմնավորվում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածով, որի առաջին և երկրորդ մասերում մասնավորապես նշված է.

«1. Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

2. Եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն կամ համաձայն նույն կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա այդ ակտը մեկնաբանվում է՝ առաջին հերթին հիմք ընդունելով ավելի բարձր իրավական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները»:

Այսինքն տվյալ դեպքում կառավարման համաձայնագրի դրույթները ոչ միայն չեն անտեսվել, այլ նաև իրենց զարգացումն են ստացել «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի իրավասու մարմինի՝ ՇԽ կողմից ընդունված կորպորատիվ նորմերում, ՇԽ կանոնակարգում՝ պահպանելով կառավարման համաձայնագրի տրամաբանությունը:

Հարցին լուծում կարելի է տալ նաև ՀՀ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի առաջին մասով, ուր մասնավորապես նշված է, որ «Եթե ծագած հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ իրավական այլ ակտերով, ապա այդպիսի

հարաբերությունների նկատմամբ կարող են միայն օրենքով նախատեսված դեպքերում կիրառվել համանման հարաբերություններ կարգավորող իրավական ակտերը (անալոգիա)»: Այդ մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված է.

«1. Այն դեպքերում, երբ սույն օրենսգրքի 1 հոդվածում նախատեսված հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը, նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող քաղաքացիական օրենսդրության նորմերը (օրենքի անալոգիա):

2. Օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում կողմերի իրավունքները և պարտականությունները որոշվում են՝ ելնելով քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից (իրավունքի անալոգիա):

3. Քաղաքացիական իրավունքները սահմանափակող և պատասխանատվություն սահմանող նորմերի կիրառումն անալոգիայով չի թույլատրվում»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի առաջին հոդվածի համաձայն քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցներն են հանդիսանում նաև իրավաբանական անձինք, ինչպիսիք օրենքի ուժով հանդիսանում են և՛ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ը և հասարակական կազմակերպությունները:

Վերոնշյալ մոտեցումը առկա է նաև «Հասարակական կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետում, որը սահմանում է. «Կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամից ոչ պակաս, կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կարգով՝ դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն կամ փոխանակելով փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է նրանում որպես հեղինակ նշված անձից»: Այսինքն օրենքը սահմանում է հերթական ժողովների հրավիրման նվազագույն՝ 2 տարվա շեմը, սակայն հասարակական կազմակերպությունների կանոնադրություններով կարող է սահմանվել նվազագույնից ավելի բարձր շեմ, այն է հերթական ժողովների հրավիրում՝ օրինակ տարին մեկ անգամ: Այստեղ, ինչպես նաև վերը նշված իրավահարաբերությունում, որևէ հակասություն չկա, ավելին՝ կա իրավանորմի ավելի կոնկրետացում և կանոնակարգում:

Վերոնշյալից բացի, «ՀՄՀ-Հայաստան» ԿԳ իրավաբանը և ՇԽ ուժ անդամները միտումնավոր անտեսել են նույն համաձայնագրի Բաժին 3.0. (ա) կետը, որը հստակ, իմպերատիվ կարգով սահմանում է. «Շահառուների խորհուրդը լրիվ կազմով պետք է գումարվի եռամսյակն առնվազն մեկ անգամ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, պարբերաբար կարող են գումարվել այլ նիստեր»: Հետևապես ՇԽ ուժ անդամները, «նիստ» գումարելով, բացի

դրանից, որ խախտել են ՇԽ կանոնակարգի դրույթները, խախտել են նաև Կառավարման համաձայնագրի նշված կետը:

Ավելորդ չէ նշել, որ մինչ օրս նմանատիպ հարցերը լուծվել են բացառապես միայն ՇԽ կանոնակարգի հիմնան վրա և զարմանալի է, թե ինչու են ՇԽ ութ անդամներն ու ծրագրի ԿԳ-ն դիմել նման ոչ իրավաչափ քայլի և անհասկանալի է, թե որն է դրա իրական շարժառիթը:

Ցավով պետք է արձանագրել նաև այն, որ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ԿԳ-ն և նշված հանդիպմանը մասնակցած ՇԽ 8 անդամները անտեսել են իրենց գործընկեր ՇԽ 7 անդամների և անդամության 2 թեկնածուների մտահոգությունները՝ քվեարկության արդյունքների ամփոփումն և քվեաթերթիկների վերանայման գործընթացի վերաբերյալ, և որևէ գործնական քայլ չեն ձեռնարկել առկա կասկածները փարատելու ուղղությամբ: Մենք մի քանի անգամ, ընդհուպ հանդիպման («նիստի») կայացման օրը, գրավոր ներկայացրել ենք մեր պաշտոնական տեսակետներն ու մտահոգությունները և առաջարկել մինչև առկա կասկածների փարատումը ձեռնպահ մնալ ՇԽ նիստ գումարելուց: Սակայն մեր մոտեցումներն ու առաջադրություններն անտեսվել են ու հանդիպման ժամանակ դրանց մասին որևէ հիշատակում չի եղել: Հանդիպմանը մասնակցած ՇԽ մի շարք անդամներ զանգահարել են ՇԽ հանդիպմանը չմասնակցած որոշ անձանց (ոչ բոլոր 7-ին), ապօրինաբար ձայնագրել, փորձելով «ընկերական» եղանակով նրանցից ինչ որ պարզաբանումներ ստանալ՝ անտեսելով մեր գրավոր պաշտոնական դիրքորոշումները:

Այս առումով թերևս ավելորդ չէ նշել, որ մեզ ուղարկված «նիստի» արձանագրությունը ամբողջությամբ չի ներկայացնում այդ հանդիպման («նիստի») ողջ ընթացքը, որը փաստում է «նիստի» ձայնագրությունը:

Հաշվի առնելով վերը նշված մտահոգություններն ու մեկնաբանությունները՝ մենք՝ ՀԱՅ-Հայաստան ՇԽ ներքոստորագրյալ անդամներս հայտարարում ենք՝

- Մենք չենք ճանաչում 13. 10. 2009 թ. ՀԱՅ-Հայաստան ծրագրի ՇԽ «նիստի» ժամանակ ընդունված որոշումները և ծրագրի կառավարման խորհրդի 5 անդամների ընտրությունները,
- Խիստ կարևորելով ՀԱՅ-Հայաստան ծրագրի անխափան և արդյունավետ իրագործումը՝ գտնում ենք, որ ծրագրի ԿԳ առ այսօր որդեգրած մոտեցումները չեն բխում ծրագրի շահերից և ունեն ՇԽ-ն ուղղորդելու և ԿԳ կցորդ դարձնելու ակնհայտ միտվածություն, որի վկայությունն է 13. 10. 2009 թ. ՀԱՅ-Հայաստան ՇԽ ապօրինի «նիստը» և դրա ժամանակ ընդունված հապշտապ, ոչ օրինական որոշումները,
- Քանի որ մեզ համար խիստ կարևոր է ՀԱՅ-Հայաստան ծրագրի ՇԽ-ի հեղինակությունը և գործունեության օրինականությունը, ապա մինչև վերջ հետևողական ենք լինելու մեր գործընկերներ Ա. Ալեքսանյանի և Գ. Բալայանի բարձրացրած հարցերի օրինական լուծման հարցում: Այդ պատճառով առայժմ զերծ ենք մնում նշված հարցերը և չլուծված խնդիրները հրապարակայնացնելուց՝ ևս մեկ անգամ շեշտելով, որ բարձրացված խնդիրների լուծումը ցանկանում ենք տեսնել միայն իրավական հարթությունում:

- Նպատակ չունենալով վտանգելու ՀԱՀ-Հայաստան ծրագրի արդյունավետ իրագործումը և ցանկանալով իրականացնել մեր ընտրողների կողմից մեզ վստահված կարևոր գործը՝ հայտնում ենք, որ վերոհիշյալ բարձրացված հարցերի և մտահոգությունների լուծմանն ուղղված քայլերին զուգահեռ, մենք կմասնակցենք նաև ՇԽ օրինական նիստերին: Սակայն հարկ ենք համարում նշել, որ դա կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե նիստի անցկացման օրվա և ժամի մասին սահմանված կարգով ծանուցվի ՇԽ բոլոր անդամներին:

- Հուսով ենք, որ պահպանելով ժողովրդավարական բոլոր նորմերը՝ այս հայտարարություն-հատուկ կարծիքը կկցվի 13. 10. 2009 թ. ՀԱՀ-Հայաստան ՇԽ «նիստի» արձանագրությանը:

- | | |
|---|------------------------|
| <i>Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա՝</i> | <i>Ս. Սողոմոնյան</i> |
| <i>Ինտեգրացիոն գործընթացների աջակցության կենտրոն՝</i> | <i>Գ. Բաղիրյան</i> |
| <i>Հայաստանի եվրոպական շարժում՝</i> | <i>Վ. Ենգիբարյան</i> |
| <i>Հայաստանի իրավաբանական հիմնադրամ՝</i> | <i>Կ. Զադոյան</i> |
| <i>«Կովկաս» հասարագիտական հետազոտությունների կենտրոն՝</i> | <i>Յ. Հովհաննիսյան</i> |
| <i>«Պրոգրես» սոցիալական հետազոտությունների կենտրոն՝</i> | <i>Ս. Ատովմյան</i> |
| <i>«Հասարակական քարոզչություն» հկ՝</i> | <i>Պ. Բարսեղյան</i> |

19.10.2009թ.